



Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ.— Ի Ս. ՂԱԶԱՐ



Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ ու հետաքրքրական թուղթերու անտիպ շարքը՝ զոր հրատարակել կը սկսինք՝ անշուշտ հաճելի ընդունելութիւն մը պիտի գտնէ մեր ընթերցասիրաց կողմանէ, նկատելով անոր քաղմագան օգուտները՝ որ կրնան յառաջ գալ ու լուսաբանել թերեւ մութ կէտեր՝ ազգային ընդհանուր կամ մասնական պատմութեան մէջ:

Կը դնենք նախ նամակ մը, գրուած՝ 1707ին և ուղղուած առ մեր Եր. Հայրը Մխիթար Արքայ. նամակագրին ստորագրութիւնն է «Վարդան Արքեպս. [Կօպոյսի]», այսպէս՝ առանց մականուան. կ'ուղղէ իր արտորավայրէն: Յայտնի է որ Յու. նանեանն է, որ վարած է Լէօպոլտի թեմը 1681էն՝ մինչև իր մահը, այսինքն մինչև 1715: Ըստ կարեւոր յամփոփ ծանօթութիւն մը տալու համար Մխիթար Արքայի հետ թղթակցող այդ բարձրաստիճան Եկեղեցականին վրայ՝ հետեւեալ գլխաւոր ժամանակագրական տեղեկութիւնները կը քաղենք զանազան աղբիւրներէ:

Հ. Ալիշանի կառնկիցին մէջ կը գտնենք.

«Վարդանս այս էր որդի Յունանու քահանայի, ուստի Յունանեան կոչեցաւ, «ի ճազու գեղջէն մերձ թօխաթու. էր ճարտար զրագիր, ուշիմ և հմուտ բառիցն «Հայոց: Երթեալ յԷջմիածին, և անտի ընդ նուիրակի զայ ի Լեհաստան. ուր «գրարեկարգութիւն և զուղղափառութիւն Հայոց տեսեալ՝ մտանէ ի Դպրատունն «Հայոց. ուստի զկնի ուսանելոյն ինչ լատիներէն՝ գնայ ի Հռովմ, և ի դպրատանն «Ուրբանեան ուսեալ կատարելապէս գլատին լեզու, թարգմանէ (գԱռաջնորդ?) «յերկինս, յամի Տեառն 1671. տպի գեղեցիկ ոճով, բայց խրթին և նոր բառից:

1. Հ. Ալիշանի Գրիգոր Ա.էն սկսեալ Լեմպերկի եպիսկոպոսաց շարքը ցուցուցած ատեն՝ այդ թուականը կը դնէ, կանխապէս ըսելով սակայն, որ ատոնց յաջորդութիւնը և թուականը դեռ քննութեան և ստուգութեան կը կարօտին (կառնկից. էջ Է), Հայ-Վեհեաին մէջ կը դնէ 1677 (էջ 342), Չամչեան ալ կը նշանակէ 1686 (տես Պատմ. Հայոց Հտ. Գ. էջ 643), իսկ Հ. Մինաս Բժշկեան (տես Ճանապարհորդութիւն ի Լեհաստան. Վեհեաին 1830. էջ 108) և Ըստկարեան Հ. Վ. (տես Եկեղ. Պատմ. 1872 էջ 382) կը դնեն 1686: